

կայր սեղանն ոսկի ի պատուական ականց ընդելուզեալ - սրբոյ Երրորդութեանն ծանուցանի միասնականութիւն¹. որ զվարս եւ զճնութիւն արդարոցն որպէս զպատուական ականց զանազանումս առ ինքեան տպաւորեալ շուարճացուցանէ, որք զմարմին եւ զարիւն Փրկչին արժանաւորապէս ճշմարտութեամբ, բազմեալք ընդ նմա, ճաշակեն ի սուրբ սեղանոյն. ըստ երեւելոյ քեզ հացն եւ ողկոյզն ի վերայ սեղանոյն՝ աւրինակ մարմնոյ եւ արեան կենարար չարչարանացն Տեառն ցուցանի³:

45 «Իսկ երեւումն քեզ սքանչելատեսիլ⁴ ձիթենւոյն, որ էր հուպ առ տէրունեան խորհուրդն, բարձր եւ վարսաւոր բազմաբեր պտղալից՝ զտուրս եւ զողորմութիւն եւ զսեր մարդկան⁵ որ առ միմեանս՝ եցոյց քեզ: 46 Զանգի մաւտ եւ առաւել եւս պատուական է աստուածութեանն աղբատսիրութիւն⁶ յամենայն բարեգործութիւնս, որով եւ առաջին արդարքն ընտիրք երեւեցան, Աբրահամ, Իսահակ եւ Յակոբ⁷. առանց որոյ եւ կուսանացն արհամարհեալ վաստակք կուսութեան՝ արտաքոյ հարսանեացն ընկեցան: 47 Սովաւ ճանաչի յանձինս մարդկան⁸ կնիք բարոգութեանն Քրիստոսի, որ ասացն, թէ *Յայսմ ծանկցեն ամենեքեան⁹ թէ իմ աշակերտք էք՝ եթէ սիրիցէք զմիմեանս*¹⁰. եւ մանաւանդ որ առատապէս զուարթամտութեամբ կամաւ կատարեսցէ¹¹ զսիրոյն պատուիրան, ոչ միայն յաղթատս, այլ եւ յընկերս եւ յեղբարս եւ առ ամենեսեան, որով¹² հաստատի խաղաղութիւն աշխարհիս, եւ տէրն փառաց բնակէ¹³ ի մէջ նոցա, շնորհելով զհանգիստ¹³ եւ զառատաբերութիւն երկրի, որպէս տեսանէիր բարձր զձիթենին լիապտուղ եւ վարսաւոր:

48 «Եւ ոստք չորք ձիթենւոյն, որ ի խոնարհ կողմ երկրի ձգտէին երեւելովն¹⁴, երեք ոստք հասարակատեսք չափով, եւ այն առաւել¹⁵ միաթիւք

1 Ատ. զսրբոյ երրորդութեանն ծանուցանէ զմիասն...

2 ԲԳտ. զուարճանայ, որք զճաշակ կենաց զմարմին... արժանապէս

3 ԲԳտ. չարչարանացն ծանուցաւ

4 Ձ. սքանչելի տեսիլ

5 Ձ. եւ զողորմութիւն ամենայն մարդկան. Ատ. եւ սեր մարդկան

6 ԲԳտ. եցոյց քեզ ընդունողն: Զանգի մօտ եւ առաջին եւ պատուական աստուածութեանն է աղբատսիրութիւն

7 ՁԱտ. արդարքն աբրահամ, իսահակ եւ յակոբ ընտիր երեւեցան

8 Ձ. յանուանս մարդկան

9 ԲԳտ. ամենեքեան զձեզ

10 Յովհ. ԺԳ 34

11 ՁԱտ. զուարթութեամբ կատարեսցէ

12 ՁԱտ. եւ յամենայն որով

13 Ձ. բնակեալ

14 ԲԳտ. եւ զառատաբար պտղաբերութիւն երկրի... եւ լիապտուղ

15 ԲԳտ. ձգտեալ երեւելով

16 ՏՏ. եւ էին առաւել. «Յին օր. անառաւել» (ձկն. ԲԳտ.)